ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ-ի ՇՄ ծրագրի և Դանիայի տեխնիկական համալսարանի Համագործակցության կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Տեխնոլոգիական կարիքների գնահատում» դրամաշնորհային ծրագիր
N 82220-URC327 II

Ընդհանուր տեղեկություն

«Տեխնոլոգիական Կարիքների Գնահատում» (ՏԿԳ) ծրագրի նպատակն է աջակցել մասնակից զարգացող/կողմ երկրներին բացահայտել և վերլուծել՝

1. առաջնահերթ տեխնոլոգիական կարիքները, որոնք կարող են տեղ գտնել էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների փաթեթում,
2. հեշտացնել էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների (ԷԱՏ-ESTs) փոխանցումը և հասանելիությունը,
3. բացահայտել փոխանցվող նախագծերը և ծրագրերը,
4. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի 4.5 կետի իրագործման նպատակով դյուրացնել մուտքը ԷԱՏ և նոու-հաու,
5. սահմանել և առաջնահերթություն տալ երկրի առանձնահատկություններով պայմանավորված այնպիսի մասնակցային գործընթացներին և տեխնոլոգիաներին, որոնք համահունչ են մասնակից երկրների մեղմացման և հարմարվողականության նպատակներին և չեն հակասում ազգային կայուն զարգացման նպատակներին ու գերակայություններին,
6. բացահայտել արգելքները, որոնք խոչընդոտում են առաջնային տեխնոլոգիաների ձեռքբերմանը, ներդրմանը և տարածմանը,
7. խոչընդոտները հաղթահարելու նպատակով մշակել Տեխնոլոգիական գործողությունների պլան (ՏԳՊ-TAP), որը կսահմանի այն գործողությունները և բարենպաստ միջավայրի շրջանակը, որը կհեշտացնի ընտրված տեխնոլոգիաների փոխանցումը, ընդունումը և տարածումը մասնակից երկրներում:

Խորհրդատվական ծառայության անվանումը՝

1. «Թափոնների կառավարում ոլորտում կլիմայի գլոբալ փոփոխության մեղմման տեխնոլոգիաների բացահայտում և վերլուծություն, ներդրման շուկայի, խոչընդոտների ուսումնասիրություն, տարածման բարենպաստ շրջանակի հստակեցում» առաջադրանքի խորհրդատու:

Առաջադրանքների կատարման ժամանակահատվածն է մոտավորապես 5 ամիս:

Խորհրդատվական ծառայությունը (այսուհետ Ծառայություն) ներառում է՝

1. Մասնակցություն շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվական հանդիպումների և աշխատաժողովների կազմակերպմանը և իրականացմանը,

2. Մասնակցություն տեղեկատվական և տվյալների հավաքագրման հաստատությունների սահմանմանը,
3. Նոր տեխնոլոգիաների հավաքագրում, վերլուծություն,
4. Միջոցառումների մշակում երկրում առաջնահերթ տեխնոլոգիաների կիրառման, տեխնոլոգիաների կիրառման խոչընդոտների հաղթահարման գործընթացի բարելավման ուղղությամբ,
5. Մասնակցային գործընթացի միջոցով արդյունավետ տեխնոլոգիաների, ներդրման խոչընդոտների և շուկայի պահանջարկի բացահայտում և որոշում.
6. Աջակցություն ազգային փորձագետներին Տեխնոլոգիական Գործողությունների Պլանի, զեկույցների և երկրի համար վերջնական զեկույցի/հաշվետվության պատրաստման և ամփոփման համար,
7. Այլ փաստաթղթերի պատրաստում, որոնք կարող են պահանջվել խորհրդատվական գործընթացը իրականացնելու համար՝ ներառելով շահագրգիռ կողմերի հետ կազմակերպված հանդիպումների, աշխատաժողովների ընթացքում ձեռք բերված արդյունքները,
8. Մասնակցություն տեխնո-սոցիալ-տնտեսական գնահատմանը և աջակցություն ՏԿԳ ազգային համակարգողին կլիմայի փոփոխության առաջնահերթ հայեցակարգերի և տեխնոլոգիաների/ծրագրերի մշակման համար,
9. Ցանկացած այլ պահանջվող նյութերի պատրաստում և տրամադրում, որոնք կարող են պահանջվել ՏԿԳ ազգային համակարգողի, ՄԱԿ-ի ՇՄԾ ԴՏՀ համագործակցության կենտրոնի, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի և ՏԿԳ հանձնաժողովի կողմից:

Աշխատանքների իրականացման ընթացքում խորհրդատուն պետք է կիրառի այն լավագույն փորձը, ղեկավարման սկզբունքները, մեթոդները և տեխնիկական խորհրդատվությունը, որոնք հասանելի են ՄԱԿՇՄ/ԴՏՀ համագործակցության կենտրոնից և այլ չարգելված աղբյուրներից:

ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը համապատասխանող Անհատ Խորհրդատուներին (այսուհետ՝ Խորհրդատուներ) հրավիրում է ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն ինքնակենսագրական՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:
Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.
- Առնվազն մագիստրոսի աստիճան այն ոլորտում, որի համար ներկայացվում է հետաքրքրվածության հայտը:
- Նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ և փորձառություն կլիմայի գլոբալ փոփոխության բնապահպանական ռիսկերի և ազդեցությունների գնահատման բնագավառում:
- Առաջադրանքին առնչվող առարկայի ասպարեզում փաստաթղթերի վերլուծական և մշակման փորձ:
- Միջազգային այլ դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող նմանատիպ ծրագրերի իրականացնելու փորձառությունը կդիտարկվի որպես առավելություն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:
Ինքնակենսագրականները պետք է ներկայացվեն ստորև ներկայացվող հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) մինչև 2016թ.-ի օգոստոսիի 8-ը, ժամը 18:00 (տեղական ժամանակով):

Պարոն Գևորգ Ներսիսյան
ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ, ք. Երևան, Արմենակյան 129, 0047
էլ-փոստ՝ info@cep.am
Հեռ՝ +37410 65 16 31
Ֆաքս՝ +37410 65 00 89